

Պուրքէ 11 ապրիլ .
Ռուսական զօրաց հաւաքական իւր նախագահական միջոց կը նկատուի Պուրքէի մէջ գտնուող Ռուսական զօրաց հաղորդակցութիւններն ապահովելու համար , երբ որ Անգլիոյ հետ պատերազմ ծագի , որ կրնայ ծովու կողմէ հաղորդակցութիւններն արգելուի :

Բեղրադուրի 11 ապրիլ .
Անգլիոյ խորհրդարանին մէջ խօսուած վերջին ատենադասութիւնները գէշ տպաւորութիւն մ'ըրին հոս :

Վիեննա 11 ապրիլ .
Կորստաքի իշխանին առ Լորտ Սալիզալլիի շրջապատներն տուած պատասխանը խորապարկան մտքը կը դատուի Վիեննայի մէջ :

Լոնտոն 11 ապրիլ .
Թայմս կըսէ թէ խաղաղութեան դաւար քայլաւորութիւնը չէ : Եւ կաւելցնէ թէ Ռուսիա պէտք է տէրութեանց խորհրդին առջև դնէ Այսթէֆանոսի դաւաճանքները , և Եւրոպիոյ առաքիւնութիւնները լսէ :

Լոնտոն 11 ապրիլ

Օրմ. Գոնա.	8 3/16
Փոյս.	1865 8 4/16
»	1869 7 7/8
»	1871 34 1/4
»	1872 13
»	1873 7 3/4
»	Եղիպտ.
»	53 1/8
Անգլ. Գոնա.	94 13/16

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ իրիկուան Լէվընթ Հէրըլտի մէջ հետեւեալ կը կարգանք .

« Մայրաքաղաքին շրջականները գտնուող Օսմանեան զօրաց բռնած գիրքերէն մէկ քանին պատնէշներով ու խրամներով ամրացնելու ձեռնարկութիւնը » Նիքոլա մեծ դքսին դժգոհութեան առիթ եղաւ : Սուլթանն այս միջոցին Ռուսիոյ հետ հաշտ ըլլալով , և Ռուսաց բարեամտութեամբ ըն ու վեհանաժողութեամբ իրեն ձեռքը թողած հողին տէր համարուելով , կը թուի թէ Մեծ դքսին յանդիմանութեանց չէր սպասեր : Սուլթանը վեհապետ մ'ըլլալով , իւր կառավարած ժողովրդեան վրայ հոգ տանելու պարտական է : Կ. Պոլսոյ ժողովուրդը կասկածի մէջ է թէ Այսթէֆանոսի դաւաճարութեան պատճառաւ կնճիւղներ ծագած ժամանակ մայրաքաղաքս կրնայ վտանգի ենթարկուի , ուստի կը խնդրէ որ իւր ապահովութեան համար զգուշութեան միջոցներ ձեռք առնուին :

« Այս զգուշութեանց մէջ ոչ սպասանայիք , ոչ ալ անքաղաքավարութիւն կայ Մեծ դքսին և իւր զօրաց դէմ » և կրնայ մէկը հարցնել թէ այս միջոցին երեւան ելած չափազանց դիւրազգածութիւններն , յաղթողին ու յաղթեալին մէջ բարեկամական համայնութիւնը զօրացնելու կը ծառայեն , բարեկամութիւն մը , որ Այսթէֆանոսի դաւաճարութեան բռնական հետեւանքը պէտք էր ըլլար , առանց որոյ մեծ իրաւունք կայ վախճալու թէ հաշտութիւնն իւր հրապարիչ քաղցրութիւնը շատ կը կորսընցնէ :

« Սակայն Բ. Դուռը Ռուսաց դիւրազգածութիւնն հանդարտեցնելու համար հրաման տուաւ Օսմանեան հրամանատարաց որ խրամ պնդել տալը դադարեցնեն » :

Այս առաւօտեան վաղը թի մէջ ալ հետեւեալ կը կարգանք .

« Նիքոլա մեծ դուքսն անցեալ օր Աքսթէֆէ Ս և Բ զօրավարաց հետ ձիով Այսթէֆանոսէն մինչև Գեա-հատեանէ պտղոյ մ'ըրած ժամանակ ամբողջութեամբ շինող Օսմանեան զօրաց հանդիպելով , մեծ պատուով ընդունուեցաւ անոնց հրամանատարներէն , և Օսմանցի գնդապետի մը հետ խօսակցելով հարցուց թէ « այդ ամբողջութիւններն ի՞նչ նպատակաւ կը շինուին » : Անգլիացի դէմ թէ Օսմանցիոց բարեկամ եղող Ռուսաց դէմ » : Գրեւ

դապետն ալ պատասխանեց թէ « ոչ Ռուսաց դէմ , ոչ ալ Անգլիացիոց , այլ Կ. Պոլսոյ վրայ յարձակող ու ինքն ինքն զէմ գնդու համար » :

Նիքոլա մեծ դուքսն հինգ շաբթի օրն Այսթէֆանոսէն Բերա Ռուսաց գնդապետութենէ եկաւ , ուր ցերեկները ժամանակ կանցունէ և գիշերներն ալ Լիվաթիա շոգենաւր կը ննջէ , որ Մոմհանէի առջև երկաթ նետած է :

Երէկ Ն. Բարձրութիւնը ներկայ գտնուեցաւ Սէլամըդի հանդիսին , որ Մէհմետի միջկիթը կատարեցաւ :

Թղթադրամաց բարձման յանձնաժողովը պաշտօնական կերպիւ կը ծանուցանէ թէ արևելքի վրայ դըրուած տուրքէն գոյացած թղթադրամներն այսօր շաբաթ հանդիսաւոր կերպիւ պիտի այրին Սուլթան Ահմէտի և Պայէզիտի հրապարակներուն մէջ :

Պատրէթի խօսքին նայելով , Ռուսիայէն եկող դաղթականներն իրենց տեղը վերադարձնելու համար Նիքոլա մեծ դուքսը պայման դրեր է , որ նախ հաւանքներն ու վիրաւորները մինչև որ չառողջանան իրենց տեղը չգրկուին : Երկրորդ , Օսմանեան կառավարութիւնը մինչև յառաջիկայ հնձոց ժամանակ ապրելու միջոց (ցորեն) մատակարարէ իրենց երկիրը վերադարձողներուն : Երրորդ , Օսմանեան կառավարութիւնն յիշեալ դաղթականաց աւերեալ կամ հրկիւզեալ բնակարանները նորոգէ :

Ասոնց փոխարէն Ռուսական իշխանութիւնն ալ վերադարձող դաղթականներուն կենաց և ընչից ապահովութիւնը կերպաշխարհէ :

Բ. Դուռը տէրութեան գաւառներն աքսորեալ կամ բանտարկեալ բոլոր Պուրքիացիներու շնորհելով , հրաման զրկեց գաւառական իշխանութեանց որ աղտաթիւն տան անոնց :

Ղաղի Օսման փաշայի հովանաւորութեան ներքև կազմուած Պաղարին վիճակահանութիւնն որ այսօր պիտի կատարուէր , յառաջիկայ երեքշաբթի առաւ ձմաց :

Բեգրապուրիէն Եւրոպական լրագրաց ուղեւոր հեռագրեր կը ծանուցանեն թէ Գեր. Խորէն Նոր-Պէյարքեպիսկոպոսը Կորչաքի իշխանին հետ տեսակցելով սիրալիք ընդունելութիւն գտեր է , և թէ Կորչաքի իշխանը փոխադարձ սոցելութիւն տուեր է յիշեալ Արքեպիսկոպոսին :

Հինգ շաբթի օրը Գարապեղի նուաճատայցին առջև թուրք զօրակառնի մը դիմել գտնուեցաւ :

Եւտիգուէէն Մարքիքէյ և Այսթէֆանոս երթալու ճանքանքը վերջին օրերս ապահովութիւնը կորուսած են : Ասկէց քանի մ'օր առաջ ժամն իրիկուան 12ին միջոցները լրագրավաճառ մը Մարքիքէյէն Կ. Պոլիս եկած ժամանակ զինուորի կերպարանքով քանի մը մարդ վրան յարձակելով զինքը չարաչար ծնծեր և վրան գտնուած երեք ու կէս լիւրան ու ժամացոյցը կողոպտեր են :

Առջի օրն ալ մարդուն մէկը ձիով Այսթէֆանոս ապրանք տարած ժամանակ քանի մը գողթականք և երեք ալ զինուորի կերպարանքով մարդիկ վրան յարձակելով ձին ձեռքէն առեր և զինքն ալ կողոպտեր են :

Հինգ շաբթիէն ուրբաթ լուսնուլա գիշերը Մահմուտ փաշայի փոխարին զուլալ շուկայի դրան քով լուսնայալիս մը խանութը գող մտնելով երկաթէ սնտուկը կտրեցին և մէջը գտնուած 300 լիւրայի մօտ ոտակը վերցրին :

Չարմանալի է որ շուկայի դրան պահապանները չեն կրցած իմանալ այս աղմուկուր գողութիւնը :

Մայրաքաղաքին Օսմանեան փաստաւորներն ի ժողով գումարուելով , քուէից առաւելութեամբ փաստաբանաց խորհրդին Անտիադահ ընտրեցին Մէրէմէուլի Ալէքսանդր Էֆէնտին և Բ. Նախագահ ընտրեցին Մէհմետ Շէհրի Էֆէնտին : Իսկ անդամներն են՝ Ա. Կարգի փաստաբաններէն Դաւիթ և Գոթթաքի Սարտէնքի Էֆէնտին : Բ. Կարգի փաստաբաններէն ալ Կիւրճեան և Մէրմիքեան Էֆէնտինք :

Չորեքշաբթի օրը Նասրը փաշային վաղը թի գէմ բացած գատառանք տեսնուեցաւ ստիկանութեան դուռը պատժական տեսնին առջև :

Նասրը փաշայի փաստաբանն էր Սարաճեան թորոս Էֆէնտին , վաղը թի ալ փաստաբանն էր Կապիթէ Կարկուր Էֆէնտին :

Թորոս Էֆէնտին փոխանորդաբար վաւերական համարուելէն ետքը հրաւիրուեցաւ իւր պահանջաւմ ընելու :

Սա պահանջեց որ Պասրայէն Մէհմետ ստորագրութեամբ հեռագրերը որ վաղը թի հրատարակած էր՝ որ Մէհմետին ըլլալը ցուցնէ և պարուհանութիւնը կամ հաստատէ , և կամ եթէ չհաստատէ՝ օրինական պատիժը կ'ընէ :

Առ այս պատասխանեց Կարկուր Էֆէնտին թէ՝ Նասրը փաշայի դէմ այդ տեսակ բաներ հրատարակողը էլ ձեւոյիպ թերթն էր ասկէ չորս ամիս առաջ և թէ Նասրը փաշա անոր դէմ այնչափ ատեն լուսնութիւն պահելով՝ կերպով մը կրնար անոր պարունակութիւնը ընդունած համարուիլ : Բաց ասկէ՛ք , երբ 180 ստորագրութեամբ հեռագրեր մը կընդունին վաղը թի , բնականաբար կըրնայ անոր պարունակութեան ստուգութեանը մինչև աստիճան մը հաւատ ընծայել , քանի որ մի և նոյն գահագատները Բ. Դուռն ալ եկած էին : արդ ըստ՝ Նասրը փաշա Բ. Դրան մէկ գատարանին առջև մի և նոյն խնդրոյն համար ամբաստանեալ և ներկայ գատարանին ալ առջև մի և նոյն խնդրոյն համար ամբաստանող չլինար ըլլալ : ուստի եղբարկացուց թէ՝ պատժական գատարանը սպասելու է միւս գատարանին տալիք վճարին :

Թորոս Էֆէնտին առ այս պատասխանեց թէ՝ գանդատ մ'ընողներուն շտապարն ըլլալը նոյն գանդատին ստուգութեանը ազդեցոյց չէ , ինչպէս որ Կարկուր Էֆէնտինին համար ժամանակին շտապար չգտնուած ըրած էին , բայց տեղեւոր եղան : Գարով Բ. Դուռը սոյն գատարաններուն , այդ գատարաններէն և այս օրիչ , զի նոյն գատարանին ներկայացեալ լընդրագրերն մէջ Նասրը փաշա մարդ կ'այրէ ըսուած չէ , մինչդեռ վաղը թի մարդ կ'այրէ ըսած է և ըստ այնմ հաստատելու պարտական՝ առանց Բ. Դրան գատարանին վճիռ տալուն սպասելու :

Ասոր ալ Կարկուր Էֆէնտին համառօտ պատասխան մը տալով եղբարկացուց խնդրելով որ՝ սոյն գատարաններ սոյն գատարանին ձեռնհասութեան կը պատկանի թէ ոչ որոշում

մը տրուի , յայտարարելով միանգամայն թէ՛ առանց ասոր սոյն գատարաններումս թեանը չպիտի մտնայ : սակայն գատարանը յայտարարեց թէ արդէն Կարկուր Էֆէնտին մանրամասնութեան մտած կը համարուի հեռագրին բաղմամբ ստորագրութիւն կրելին՝ անոր ստուգութեանը իւր ապացոյց յառաջ բերելով : սակայն գատարանը որոշում մը չտուաւ և յառաջիկայ երկուշաբթի դարձեալ կանչել որոշեց ու ատենը դոցուեցաւ :

Գատարանին ընթացքէն տեսնուեցաւ որ թորոս Էֆէնտին իւր ճարտար փաստաբանութեամբ գատարանը պիտի վաստակի , զի վաղը թի իւր գրածները հաստատուելու կողմին վրայ շատ պնդեալ տրամադիր չը տեսնուիր :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Է Ս Ն Ս Մ Ը Ո Ւ Մ Ո Ւ Մ Ի Է

31 մարտ ուրբաթ իրիկուն	8.35
1 ապրիլ շաբաթ առաւօտ	
բացուեցաւ	8.32
ժամ 6 ին	8.34
Բուսնի երկաթուղի	Փր. 27 50
Թղթադրամ	Իր. 260

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Կ. Պոլիս 31 Մարտ

Սուրբ Թէոֆիլի բաժ.	Անգլ. Իր.	2.30
» Գիտնականութեան	»	2.
Կ. Պոլսոյ Պանքային	»	2.35
Քրիստի Թէոֆիլ	»	2.45
Քրիստի Օսթրո-թիւրք	»	—
Փոյս.	1863	Ֆր. 40
»	1865	» 40
»	1869	» 38 50
»	1872	» 44
»	1873	» 37
Թրամուայ	Օրմ. Իր.	4 5

ԸՆԹԱՑՔ ԳՐԱՄՈՑ

31 Մարտ

Անգլ. Իր.	ըր.	109 3
Նասրէյն ոսկի	»	86 33
Խմբագրի Ռուս	»	88 27
Գըրմից	»	50 32
Հինգ ֆրանք	»	—
Հինգ նոյց	»	424 20
Պղինձ	»	469

ԱՂԳԱՑԻՆ

Մայրաքաղաքին Գաղղիական դեպան վսեմ. Պ. Ֆուռնիէ հինգ շաբթի օրը Գումգափու Հայոց Պատրիարքարանը գնաց ի փոխադարձ այցելութիւն Ս. Պատրիարք հօր , և արժանաւոր պատուով ընդունուեցաւ Պատրիարքական Գեր. տեղապահէն : Սակայն Ն. Վսեմութիւնը Ս. Պատրիարքին հետ տեսակցելու փափաքելով , չթողուց որ Պատրիարքարան գալու լուր զրկեն Ն. Սրբազնութեան , այլ ինք անձամբ ելաւ ի նոր տունը գնաց և երկարօրէն տեսակցեցան :

ԹԱՂ. ԽՈՐՀՈՒՐԴ ՍՍՄԱԹԻՈՑ

Նոր Գոր լրագրոյ վերջին թիւերուն մէջ խիստ ծանրակշիւ իրողութիւններ կամ մանաւանդ ամբաստանութիւններ կը տեսնենք Սամաթիոյ թաղ. խորհրդոյ վրայ :

1. Սամաթիոյ եկեղեցւոյն հրապարակին մէկ կողմը գտնուած Յովակիմ Աննայի մատուռին տեղը , որ դեռ Սամաթիոյ վերջին հրդեհէն առաջ հին կամարով մը ծածկուած էր , և որոյ մէկ կողմը մշտապէս կանգնող մ'է գտնուած մը կար , յատուկ ժամակոյտի մը պահպանութեան ներքև : յիշեալ թաղ. խորհրդոյ անդամներէն մին 40 ոսկիի գներ է , և հիմա ալ տուն մը կը կանգնէ վրան : Սամոյգ է արդեօք այս աններելի իրողութիւնը—կը հարցնենք աղբային վարչութեան Տնտեսական խորհրդոյ :

* Առանդութիւն կայ թէ սոյն մատուռը մեծն Կոստանդիանոսի մայրը՝ Ս. Հեղինէ կայսրուհին շինած էր :

2. Նոյն թիւը խորհրդայ բարեփոխման անդամներէն մասնք եկեղեցւոյ պիտոյից համար իբր թէ 330 ոսկի վտանգաւորութիւն ըրեր են անցեալ տարի, և հիմա իրենց այս պահանջը դադարեցրի մը վրայ դարձուցեր են՝ ծանր պայմաններով, և եկեղեցւոյն ամենակարեւոր մէկ կայունածն ալ գրաւ տուեր են յիշեալ օտարականին: Այս ալ ստոյգ է արդեօք: — Կը հարցնենք դարձեալ Ազգ. վարչութեան Տնտեսական խորհրդայ:

Եթէ դժբաղդաբար ստոյգ են, տարակոյս չմնար թէ ոչ միայն դործողներն՝ այլ և նոյն իսկ Տնտեսական խորհուրդը ծանր պատասխանատուութեան ներքե կիշնայ իրեն թոյլատրող այսպիսի ազգամիտութիւնը:

Արդարեւ չյուսացուի որ Տնտեսական խորհուրդը նախապէս հաւանութիւն տուած կամ թոյլտուութիւն ըրած ըլլայ. բայց եթէ իմանալէն ետե անհօգ կամ անտարբեր մնայ, չկրնար ու ե կերպիւ արդարանալ և ինքզինք պատասխանատուութենէ ազատել ազգին առջն:

Ուստի կ'ստանանք որ Տնտեսական խորհուրդն անյապաղ ազգու միջոցներ ձեռք առնելով՝ վերոյիշեալ մատուցին տեղն ազգին վերադարձնէ և ըստ առաջնոյն նուիրագործէ. նմանապէս գրաւի դրուած եկեղեցւոյ կալուածն ալ կորստեան վրտանգէ ազատէ առանց ժամանակ անցունելու:

Ի վերջոյ պարտք կը համարենք նաև յիշեցնել թէ այս տեսակ ապօրինութեանց ձեռնարկող յանդուգն թաղ. խորհուրդն յուզողութիւն ածելու և մինչև իսկ պաշտօնէ լուծելու դործն ալ Քաղ. ժողովոյ կը պատկանի:

Տիկիսի Մշակ օրագրին մէջ հետեւեալ լուրերը կը կարդանք.

Էջմիածնում փետրվարի 19ին շատ շքեղ կերպով է կատարվել թագաւոր Կարգեալի գահակալութեան տարեգահակահանգի և Վեհափառ Կաթողիկոսը հաղկերթով է տուել վաղարշապատում գտնված բոլոր զորականներին: Գեներալ Լազարեւի իր զորքերով գտնուում է վաղարշապատում: Արդէն վեհափառ Կաթողիկոսը յատկապէս է Ղազարապատը ուսաց զորքերի բնակութեան համար, որոնք գեներալ Լազարեւի հրամանի տակ են:

Ս. Պետերբուրգից մեզ գրում են: «Երբայք օր, փետրվարի 23ին, այս տեղի հայոց եկեղեցում կատարվեցաւ Գեներալ Ծովզիմիրովի հոգեհանգիստը, և եկեղեցին լի էր հայ և և ուսու հասարակութեամբ: Ամենքը եկել էին հանգուցեալի յիշատակին իրանց յարգանքը նուիրելու: Հայր վահան վարդապետ Բատումեանց մի կարճատև ճառ խօսեց, որով ցոյց տուեց հանգուցեալի նշանակութիւնը: Գեներալ Ծովզիմիրովի մասաց ըստովնը, իր ամբողջ կրանքը նուիրեց ուսաց տէրութեան ծառայութեանը. նա իր կեանքի մէջ պատիւ բերեց ուսաց գէներին իր նշանուոր հանձարով, իսկ կառավարչական ասպարիզում ստացաւ ժողովրդի ամենակերպ համակրութիւն: Այդ երկուստեք հանձարը, ինչպէս և նրա արժանաւոր պաշտօնակիցները, Լորիս Մէլիքով, Տէր Ղուկասով երկուքը Լորիս Մէլիքով, Լազարեւի Ալիազով, Դենիքէիով և ուրիշները պատիւ են բերում հայոց ազգին, կենդանի ապացոյց տալով համայն աշխարհին, որ այդ ազգը արուստ

է և պարունակում է իւր մէջ այնպիսի բարոյական և մտաւոր առողջութիւն, որոնք այսպիսի ճշմարտութեամբ կարող են ներկայացնել այդ տեսակ նշանաւոր անձինք իրանց տէրութեանը: Քարողիչը վերջացրեց իր խօսքը ասելով. «Այստեղի հայ ուսանողները ցանկանալով յարգել բարի և քաջ մարդի և բարի հայի յիշատակը այսօր, ահա՛, պատճառ եղան հանգուցեալի հոգեհանգիստ կատարելուն:»

Լուսմենք որ վախճանված Հայ գեներալ Լորիս Մէլիքովի մարմինը չեն բերում Թիֆլիս, այլ թաղում են Էջմիածնի մէջ, որովհետև ինչպէս լուսմենք, կառավարութիւնը այժմ արգելել է ամբողջ մեռածների մարմինները բերել մեր կողմերը, այլ հրամայել է տեղի վրա թաղել:

Մեզ գրում են վաղարշապատից որ մօտ 40 աշակերտ թողել են ձեռնարանը, տեղափոխվել են գիւղը և չնայելով ճամբարի վարչութեան բոլոր աշխատանքին, չեն կամենում վերադառնալ: Ասում են, որ աշակերտները մեզ անյայտ պատճառներից դուրսված՝ ծեծել են չէպէճեան ուսուցչին: Զե՛ կարող արդեօք էլ միտածնի հոգեւոր իշխանութիւնը մեկնել թէ ինչ է աշակերտների անբուսականութեան պատճառը: Ճամբարի աշակերտները բոլոր հայաբնակ քաղաքներից են. ուրեմն ուսուցչինը պէտք է զգուշ վարվեն դրանց հետ, եթէ ոչ աշակերտների համբերութիւնը կարող է հասնել և այն ժամանակ Հայ երեսմաների բոլորը կարող են լսել նրանց ծնողները:

ԹՂԹԱՅՈՒԹԻՒՆՔ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՑ

Բ. ՆԱՄԱԿ
18 մարտ 1878 Ձմեռնիա
... խմբագրապետ.

Մարտ 14. Երեքշաբթի. ըստ Տաճկաց ժամը 7ին Լոյսի Թեֆէ անուն յամբարայշտ շողենաւով Աղեքսանդրապոլսէն բաժնուեցանք:

Նաւուն մէջ բաւական ճանրող կար: Այս շողենաւը, անցեալները վառնայէն վերադարձին, Մանդուկի միջոցաւ Տիւրքապոլս շողենաւն էր:

Նաւ մտած օրերնիս փոթորիկն սկըստ:

Մէն մի լեռնացեալ ալիք՝ արշաւերը կը սփռէին մահախնայունաց վրայ:

Մովը՝ ամեն մարդ բռնած էր անանկ որ ուղղորդ ոչ կրնային բան մը ուտել, և ոչ տեղերնուն երեքալ. բաց ի մենէ, որ ընդհակառակը՝ ծովը մենք բռնած էինք:

Ամեն կողմ վայնասունի ճիւղեր, կիսանուաղ հեծկտանաց հառաչանքներ կը լսուէին:

Ոմանք կիսամեռ, և ոմանք ընկողմնացեալ՝ մարմիններն կը ճանկրտէին...

Այն ինչ գիշերուան թանձրամութեամբ թաթեան մէջ նաւուն գեղը կտրեցաւ, անմիջապէս նաւապետը և նաւաստիքը չի հարեալ՝ սկսան վերանորոգել, առանց շողենաւուն ընթացքը կտրեցնելու:

Զարեկարթի գիշեր օդն անհանդուրժելի սաստկութեանէն ճարահատեալ՝ ստիպուեցաւ շողենաւը յաջնաթիւն փոխադրուիլ մը քաշել:

Նաւապետը՝ հաստ և կարծր պարանոց մը կ'սլփնէ կապուած էր:

Ո՛հ, Աստուած իմ, ոչնչութեան և յաւերժականութեան մէջ՝ ի՜նչ արտաշարժ կըլինի եղբ մարդու տեսարանը...

Նոյն վայրկենին Տօլախիս թողը, վոլթերին դաւալը՝ Աստուած, Աստուած կաղաղակէր, ու կաղթէր...

Վերջապէս 48 ժամ ստիպիլ արեւի ծուծեամբ Միջերկրականի վրայ յոռի ջրման ընկէ ետե, ուր ուրեմն ստիպուե-

ցանք Տիւս ըստած կղզեակին մէկ խորն խորանի, դեթէ 12 ժամու չափ:

Կարծեմ՝ առաջին անգամ է որ սոյն ձախարդ շողենաւն այս կողմերը ձանադարձորդութիւն կընէր, վասն զի Լեւոսի ուղղակի գիծը անգամ չէր դիտէր:

Սամա կղզւոյն մօտէն կընթանար շողենաւը, որուն մէկ խոռոչին մէջ ծաղկաղաղ փոքրիկ վանքուկ մը կար, որ երբեմն համարաւոր ուխտատեղի մ'է եղեր Յունաց Կալիպէնեան...

Սամոսի բարձր լեռանց գէնթները դեռ ձիւնապատ էին:

Հուսկ ապա, երէկ գիշեր ողջամբ հասանք Քիոս:

Քանի մ'աղնիւ բարեկամաց հետ—ընդ որս Մարդարեան Նաւն էֆէնտի և Հալիպէսի Միքայիլ աղայն—ծուռ գաղու ելանք կղզին:

Շուկայի կրպակները գրեթէ մեծ մասամբ բաց էին:

Կղզւոյն մէջ ասոնջականող Մեծ—Վէ—գիւրին տունը այցելութիւն մը տուի:

Վերջին ծայր մեծարանքը ընդունելութիւն ըրին:

Սոյն կղզին՝ բարեհամ Ջուր մ'ունի, որ Պօսոյ Կեօ—Եֆէէ ցուրտ ջուրը կրնայ համակընել, և որ երեք ժամ հեռաւորութենէ մը կը բերուի:

Առաջին կարգի գեղեցիկ պանդոկներ և համարամ ճաշարաններ կը գտնուին օտարական յաճախորդաց բարեկալելչութեանը համար:

Այս առաւօտ՝ աղամային մթութեամբ Ձմեռնիա մտանք:

Ուրիշ գալ շարժու Յոպպէ երթալու տրամադրութիւն ունիմք ընտանեօք հանգերձ:

Թ. ՆԱՄԱԿ

21 մարտ 1878 Ձմեռնիա

Կիւրակէ օրը Ձմեռնացի Պ. Պալի Գըրիգորեան՝ աղնիւ երկրասարդին հետ Պուռնովա անուն գիւղաքաղաքը դացինք:

Ասի Ձմեռնիոյ առաջին երեւիլի գիւղուն է:

Հին անունը՝ Պիւռն—Ապառ է:

Կրնանք ստուգարանել Արաբերէն Պէրան և Ապար բաւերէն, այսինքն ասոր—նորանքան մը, որ Եւրոպացիք Պուռնապատ կը գրեն, ու ուսմկորէն՝ Պուրնա—ովաը կարտասանեն:

Պուռնովայի մէջ՝ քսան տուն Հայ ըլնակէք կան:

Մասնաւորաբար Յովսէփ—Չէլէպին, Տիկին Աղաթիլ և Եսայեան եղբարք գեղեցիկ ամրապնդին սպարանքներ ունին:

Ունինք գետահայեաց Ս. Խաչ անուն փոքրիկ եկեղեցի մ'ալ, որ երէկ գիշեր կողպուուեր է բոլորովին:

Սոյն եկեղեցին՝ առաջին անգամ չէ որ մերկապարանոց կը փեթտուի թերեւս դրացի Օրթոտոքաներէն...

Ասկէ առաջ ալ նմանօրինակ դժբաղդութեան մը հանդիպեր է:

Տեղական ազգային վարչութիւնը, առ այս՝ կուսակալութեան բողոք մատոյց *:

Պուռնովա՝ Ձմեռնիա բնակեալ Եւրոպացի հարուստ վաճառականներու ամալ բանոց է:

Անդղիացի Վիթէլ անուն մեծ վաճառականը սիրուն պարտէզ մ'ունի, որուն մէջ գեղջկական արեւակներ կային:

Կրնեն թէ՛ Սուլթան Աղիդ երբեմն հոն ասպնդականած և թեթեւածաղ մ'ըլած է:

Մ. Վիթէլ՝ Պուռնովայի մէջ ժողովըրդական մեծ համարում ունի: Սա՛ գրեթէ գիւղին նահապետը կը սեպուի:

Վայելուէ է գիւղիս բնակութիւնը գարնան և ամառն ժամանակ:

Զերդ. Ա. Յ. Այլալեան

Ա. Զ. Դ.

Լրագրոյ նախընթաց թիւով հրատարակեալ հեռագրալրոց կարգին մէջ Լոնտրոյէն ապրիլ 10 թուով հե-

* Գարշը—Եսայի Ս. Աստուածածնայ Հայոց եկեղեցին ալ գիշերը գողերն եկեր՝ պարսիկին կողմէն պատը ծակելով ուղեր են մտնել, բայց չուտով իմացուելով խոյս տուեր են:

ապրիլի վերջին պարբերութիւնն հետեւեալ կերպիւ պէտք է կարգալ.

«Կորչաքօֆ իշխանը կը հարցնէ «Լորիս Սարգսիւրի թէ Անգլիա՝ Այսթօնէֆանսի դաշնադրութեան դուրս «ուրիշ դաշնադրութեամբ մ'ինչպէս պէս իւր և ուրիշ տէրութեանց իրաւունքները պիտի համաձայնեցընէ Արեւելեան քրիստոնեայ ժողովըրդոց բարեկեցութեան հետ:»

Ա. Զ. Դ.

ՄԱՍՆԱԺՈՂՈՎ, ՕՍՄ. ՊԱՐՏԱՏԵԱՐՑ Ի ԹՈՒՐԻՒԱ

Կը օնուցուի հասարակութեան թէ Օսմանեան պարտատեարց մարտ 9/21 ի ընդհանուր ժողովին մէջ քուէարկեալ որոշմանց մէկ օրինակը հետեւեալ հաստատութեանց ամեն մէկուն մէջ դրուած է, ստորագրութիւն ստանալու համար:

Պանք Էնթէնալ Օթման. Բրէտի Լիօնէլ. Պանք տը Քոնստանթինօքը. Սոսիթի Ժէնէալ տը Լ'Սնիս Օթման. Բրէտի Ժէնէալ Օթման. Սոսիթի Օթման տը Շանս է տը Վալէօն, և Մօսկա Ա. Զուրդի գրասենեակը Ղալաթիա Գէորգ պէյ խան, 12:

Լ. Ս. Ս. Ս.

ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ի Թաթարնի Բաթէր Ընթերցասէն Եթէնէն

Դ. ԵՐԵՎԱՆ

1878 ապրիլ 2 կիրակի գիշեր թիւ 2 1/2

ՄԱՍՆ Ա.

Նուագը.— Տ. Զուսաճեան էֆ. և Օր. Նարդոս

Ուղեթիւր Օլիմիա (չորս ձեռքով) Տ. Զուսաճեան.

Ուղեթիւր Տոն Ժուան (Բիանո Սօր) Մօցարտ. Օր. Նարդոս.

Բանախօսութիւն—Տօթթըր Հէքիմեան. Կենդանական ջերմութիւն—Բաժանուում կենդանեաց ջերմութեան նկատմամբ—Մարմնոյ այլ և այլ մասանց բարեխառնութիւն—Ջերմութեան աղբիւրներն—Արտաքին ջերմութեան աղբիւրներն կենդանական տնտեսութեան վրայ:

ՄԱՍՆ Բ.

Նուագը.— նոյնը.

Ուղեթիւր Կիւսով Թէլ (չորս ձեռքով) Ռօսսինի

Կրան Փարթիս Հոնկրուա (Բիանո Սօր) Քէթիէր, Օր. Նարդոս.

Բանախօսութիւն—Տիգրան էֆ. Եռուստֆեան.

Տասն և իններորդ դարուն ոգին:

Ի. Լ. Ա. Ն.

Խաթալանէլերտէն մատաւ, թալիսաթ իշխն մեղտարի քեաֆի դօյուն էթի պուլմազ մուհալ հիւքմինէ կիրմիլ օրմաքնտան տօլալը, իշպուտօգան տէօթթ սէնէյիլ բուլմիլէսի մարթը իշուն, խաթալանէլերին դայիլէ վէրլիւք իշուն, գարուրի սրլըր էթի դօնթրաթօւա լապլթ օլուն մըլ, վէ պուլուն պէհէր գըլէսի իշուն օն պիլ դուրուլ պէտէլ իլմաթը դարալաշարըրըլ օլըրըլնաւան, էս հապը թայիլնալ խթիհգաղլերին սըլըր էթի օլարաղ մահալլերինտէն այլէն, վէ եախօտ իսթէրլէր իտէ պէհէր գըլէսի դայիլէ եիւլ դուրուլ հիսապիլ իլէ օն պիլ դուրուլա օլալաղ նիգամիէ խաղիլնէսինտէն պ տէլէն ալմալերի լաղըմ կէլէճէյի մալիւմլէրի օլմաղ իւղըլ իլան օլունուր:

14 Մարտ 1878

Պապը Սէրասքէրի

